# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 28

04/09/2017

ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-013-301-033 , 05-013-301-039 , 05-013-301-038 ԵՎ 05-013-301-040 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով այն հանգամանքը , որ ներքոգրյալ հողամասերը անօգտագործելի են և չեն ծառայում իրենց նպատակային նշանակությանը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Աստղաձոր համայնքի շահերից ելնելով հավանություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող 05-013-301-033 ծածկագրով 0.6418 հա մակերեսով և 05-013-301-039 ծածկագրով 0.2061 հա մակերեսով արոտավայրերի , 05-013-301-038 ծածկագրով 0.2351 հա մակերեսով և 05-013-301-040 ծածկագրով 1.9201 հա մակերեսով վարելահողերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսականից փոխադրել կապի , տրանսպորտի , էներգետիկայի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակությանը , իսկ գործառնական նշանակությունը՝ համապատասխանաբար արոտավայր և վարելահող հողերի կազմից փոխադրել էներգետիկայի հողերի գործառնական նշանակության:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին գործընթացը կազմակերպելու համար համապատասխան հողաշինարարական գործերը ներկայացնելու Գեղարքունիքի

մարզպետին՝ ՀՀ Կառավարության ,,Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման,, միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ
6. ԿՆՅԱՉՅԱՆ ԳԱԳԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**